ՆՈՐ-ԴԱՐ

№ 193 ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 5 Նոյեմբերի 1899 Ուրբաթ, 5 Նոյեմբերի ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 193

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը 1՝ ր., հատավ 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ Даръ" կամ Tiflis. Rédaction „Nor-Dar"

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների բառին 2 կ., բեկյամների համար կրկնապատ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր:
Մեզ գրում են. — Շուշուց:
Կ. Պոլսի հայ թերթերից:
Նամակ խմբագրութեան:
Հայոց թատրոն Բաքւում:
Թղթակցութիւններ.—Նոր-Նախիջևանից: Ախալքալաքից:
Քաղաքական.—Անգլօ-տրանսվալեան պատերազմը:
Հեռագրներ:
Բանասիրական.—Գրական ակնարկներ:
Տեղեկատու:
Յայտարարութիւններ:

«Նոր-Դար»-ի խմբագրութիւնը գտնւում է Վորոնցովսկայա փողոցում, Սալալօվնայա զօրանոցի դիմաց, տուն № 20:

ՔՐՈՆԻԿՈՆ

Սրանից մօտաւորապէս ութն ամիս առաջ Մխիթար վարդ. Տէր-Մկրտչեանը նշանակուեց Ալէքսանդրապոլի յաջորդ, իսկ Թովմա վարդապետը Տաթևի՝ վանքի վանահայր: Յիշեալ երկու վարդապետներն, իբրեւ պաշտօնատեղերում կարճ ժամանակ մնալուց յետոյ, կանչւեցին ս. Էջմիածին: Այժմ նրանք գտնւում են Թիֆլիսում. Մխիթար վարդապետը նշանակուած է ս. Սարգսի վանահայր, իսկ Թովմա վարդապետը—Մարտի կալուածների կառավարիչ:

— Ս. Էջմիածնից մեզ գրում են, որ Վեհ. Հայրապետի կարգադրութեամբ Գէորգեան ճեմարանի դասատու-վարդապետները բացի վարդապետական 300-ական ր. ռոճկից, ռոճիկ են ստանալու նաև դասերի համար իւրաքանչիւրը 300 ր., իսկ տեսուչ Կարապետ վարդապետը—1,000 ր.: Վերջին ժամանակս ս. Էջմիածնի միաբան դասատու կուսակրօնները ռոճիկ չէին ստանում:

— Գէորգեան ճեմարանի երկրորդ լսարանի ուսանող (ուսարակի) Մեսրոպ Պապովեան, Վեհ. Հայրապետի կարգադրութեամբ, գնում է Քիշնեւի գիմնազիական ուսումն աւարտելու, որից յետոյ կուսակրօն պիտի դառնայ: Ս. Էջմիածնում վաղուց զգացւում էր գիմնազիստ-վարդապետի կարիքը:

— Ներկայումս Թիֆլիսումն է ս. Էջմիածնի սինոդի պրոկուրոր պ. Կանչէլին:

— Ինչպէս ամեն տեղ, այնպէս և Նուխում Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան ճիւղի հետ միասին փակւում է նաև այդ ճիւղի հաշւով պահւող գրադարան-ընթերցարանը: Ճիւղի անդամները, ինչպէս հաղորդում են «Նով. Օբ.»-ին, վճռել են գրադարան-ընթերցարանը նուիրել քաղաքին, որպէս զի պահուի քաղաքի հաշւով և ժողովուրդը չզրկուի այդ կրթական հաստատութիւնից, որը իւր տեսակում միակն է տասնեակ հազար բնակիչ ունեցող ամբողջ քաղաքում:

— Ինչպէս յայտնի է, ռուս և թուրք կառավարութիւնների կողմից յանձնաժողովներ էին գնացած իւր անգամ քննելու համար վերջերս ռուս-թրքական սահմանագլխի վրայ տեղի ունեցած ընդհարումները: Ներկայումս Իգդիրից «Կավկազ»-ին հեռագրում են, որ քննութիւնն արդէն վերջացած է, և ռուսաց յանձնաժողովն այս օրերս վերադառնում է Թիֆլիս: Թուրք կառավարութեան լիազօր Թեֆիկ-փաշան մեկնել է Բայազետ:

— Հոկտ. 17-ին, կիրակի օրը, Կ. Պոլսի հայոց ազգ. հիւանդանոցի մէջ վախճանուել է թրքահայ յայտնի երաժշտապէտ Ստեփան Սուրէնեան: 1851-ին է ծնուել նա և 20 տարեկան հասակում ուսումն աւարտել է Հռոմի երաժշտական համալսարանում: Նրա երաժշտութեան ուսուցիչն էր մեծահռչակ Լանցան: Հանգուցեալը իւր արուեստը կատարելագործելու համար յաճախ ճանապարհորդել է Եւրոպայի զանազան կենդրոններ. Նա 25 տարուց վեր ուսուցչական պաշտօն է վարել Կ. Պոլսի հայ և օտար դպրոցներում: Ստեփան Սուրէնեանը հասարակ մի երաժշտապէտ չէր. Թրքահայոց յայտնի արուեստագէտների շարքում առաջնակարգ մի տեղ ունէր գրաւած, որը հաստատում են իւր 300-ի մօտ ձայնագրական տախտակները: Ի մէջի այլոց նրա գրիչ գործոցները կարելի է համարել «Հայր մեր»-ը, «Rossignol»-ը, «Forget me not»-ը և «Grande marche»-ը, որոնք զանազան անձերի են նուիրուած. վերջինս ձօնուած է սուլթանին: Ստեփան Սուրէնեանը իւր կեանքում միմիայն արուեստագիտութեան մէջ չի որոնել իւր բարձր հաճոյքը. նա շարունակ գրել է թրքահայ մամուլի մէջ և աշխատակցել եւրոպական թերթերին ու հանդէսներին: Նա թարգմանած ունի Տասսոյի բոլոր գործերը, ուրիշ գրուածքներ էլ նա շատ է ունեցել, բայց այդ բոլորը հրդեհի ճարակ են եղել: Զարմանալի զուգադիպութեամբ սա ևս Կ. Պոլսի ազգային հիւանդանոցում մեռաւ, ինչպէս Չուհաճեանը՝ Իզմիրի հիւանդանոցում:

—Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն Բաթումի քաղաքագլխին հաղորդել է, որ լուսաւորութեան մինիստրն անհրաժեշտ է համարել Բաթումում աղջկանց գիմնազիոն բանալու, որի պահպանման համար մինիստրութիւնը կարող է տարեկան 2,000 ր. տալ, եթէ մնացած ծախքը կըհոգայ ինքը քաղաքը: Գիմնազիոնի համար տարեկան ծախք կըլինայ 13,300 ր.: Այդ գումարից 10,000-ը կարող է գոյանալ աշակերտուհիների թոշակագումարից (որովհետև գիմնազիոնը կարող է ունենալ 200 աշակերտուհի, [illegible] չիւրը 50 ր. թոշակավճարով), 2000-ը տալու է մինիստրութիւնը, իսկ մնացած 1,300 րուբլին գալիս է քաղաքին:

— Թիֆլիսի քաղաքային խորհրդի քարտուղար պ. Մ. Նակլիմով հրաժարուել է քարտուղարի կոչումից:

— Թիֆլիսի քաղաքային խորհրդի երկուշաբթի օրուայ, նոյեմբերի 8-ի նիստում նշանակուած է քաղաքային վարչութեան երկու նոր անդամի ընտրութիւն Մ. Ս. Ջհամալովի և բժ. Վ. Ն. Հերցեգովի փոխարէն:

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՇՈՒՇՈՒՑ. Նուխիից—Շուշի ընկած խճուղին շատ անկարգ դրութեան մէջ է: Կայարաններում չարունակ ձիու պակասութիւն է զգացւում, եղածներն էլ, ինչպէս ասում են, «Նարուից բէթար» են: Ճանապարհները փչացած են բայց ուշադրութիւն դարձնող չկայ: Այս բոլորից առելուած թէ մանաւոր և թէ պօստային հանրակառքերը երբեմն գիշերուայ ժամը 3-ին են հասնում երբեմն 4—5-ին: Դէպք է եղած, որ պօստային հանրակառքը Շուշի հասել է միւս օր ժամը 9-ին: Բայց մեթէ այս ներելի է, երբ 105 վերստի վրայ հոգուց 6 ր. փող են առնում: Չգիտենք ինչ է մտածում Լունեակինը, որի ձեռքին է այս տրակտը, մինչև զանգատները կարդալուց յետոյ: Կան և ժամագիր (սրոչնի) կառքեր, որոնց համար խօսելն անգամ աւելորդ է. այդպիսի կառքերից մէկով ճանապարհուել է մի երիտասարդ զինուորագրութեան ենթարկուելու համար և հինգ առաջին կայարանում նկատել է, որ բատմանչափ իրեր են գողացուած կառքից: Դողը տանիցն է: Աչքներս լոյս:

—Ձմրան ցրտերն արդէն սկսուած են, և դեռ նոյեմբերի կէսերին արդէն ձիւն եկաւ:

—Այստեղ նոյնքան թանկութիւն է տիրում, ինչպէս և մեծ քաղաքներում, բայց վերջերս արդէն չափն անց է կենում. օրինակ, ձուն՝ հատը 2 կոպէկ է: Դասական պիտոյքներն ու գրքերը հօ ծախւում են՝ ինչպէս գրավաճառն է կամենում: 3 կոպէկանոց գիրքն այստեղ [illegible] մի գրատախտակ, որ արժէ 50 կ., մի նոյնիսկ աշակերտի 1 րուբլի են գնահատել՝ օգտուելով այն հանգամանքից, որ մարջին կազմերը չի եղել, որի վրայ գինն է նշանակուած:

—Քաղաքիս հրապարակի վրայ պատրաստ է շինում քաղաքային վարչութիւնը, ուրեմն այսուհետև Շուշին պիտի ունենայ և իւր միակ հրապարակը: Փոխանակ այդ բանի բաց. վարչութիւնը աւելի լաւ կանէ՝ լապտերների թիւը շատացնել, որոնց պակասութիւնը շատ զգալի է մանաւանդ Շուշու պէս խորդուբորդ փողոցներ ունեցող քաղաքի համար:

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

Ս. պատրիարք հայրը երեկ նախագահեց Նպաստից յանձնաժողովին: Նախապէս եղած որոշման համաձայն, հօ զորդաւեցաւ յանձնաժողովին, թէ որբանոցներու և նպաստընկալ վարժարաններու բաշխուելու համար իւր կողմէն որոշուած վայրերը 10 սնտուկ գիրք ղրկուած են. առանցմէ 3 սնտուկ Էրզրում, 3 սնտուկ Ատանա, 2 սնտուկ Սըվազ և 2 սնտուկ Արաբկիր ղրկուած է: Յանձնաժողովը ստանձնեց հասած կարօտութեան գրերը կարդալով, որոնց 250 ոսկի Վան, 150 ոսկի Բաղէշ և 30 ոսկի Եզնկայի ամենակարօտ գիւղերը ղրկել՝ կարօտեալներու բաշխուելու համար, որպէս զի յառաջիկայ ամուսնուն ցանքի համար հարկ եղած ցորենը կարենան գնել:

—Վանայ այցելու հովիւ տ. Ներսէս եպիսկ. Ասլանեան հեռագրած է պատրիարքարան, թէ գաւառին մէջ գտնուող 39 հայ բանտարկեալներէն մինչև հիմա 33-ը կայսերական ներման արժանանալով ազատ արձակուեր են, և այս առթիւ մաղթանքներ կատարուեր են ն. կ. վեհափառութեան արեւշատութեանը համար:

—Բաղէշէն պատրիարքարան հասած հեռագիր մը կը ծանուցանէ, թէ վիճակին գաւառական ժողովին առաջնորդ ընտրած է տ. Եղիշէ վ. Չիլինկիրեանը, որ մինչև ցարդ տեղապահի պաշտօն կվարէր գոհացուցիչ կերպով:

—Ալթամարէն գրած են պատրիարքարան, թէ Վանայ այցելու հովիւ տ. Ներսէս եպիսկ. և իր օգնականը՝ տ. Վահրիճ վարդապետ. 11-ին Ալթամար եկ՛ միալով, Աթոռին վիճակին վրայ անհրկանութիւններ քաղեր և անկէ Կամաւուշ մէկ քանի գիւղերն ալ այցելելէ վերջը Վան վերադարձեր են:

—Վանայ այցելու հովիւ Ներսէս եպիսկոպոս Ասլանեան Ալթամար այցելելէ ետքը՝ Վարագայ վանքը դարձեր է, ուր կը գտնուի այս պահուս: Կը կարծուի, թէ Ասլանեան սրբազան ժամանակ մը պիտի մնայ Վարագ, մինչև որ պատրիարքարան ուղղած իր գրերը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

II.

Տրանսվալի պատմութիւնը.—Նրա կազմակերպութիւնը.—Ոսկու հանքերը.—Անգլիա և Տրանսվալ.—Պատերազմի շարժառիթները:

Ամառս ռուսաց թերթերում ես գտել էի մի երկու յօդուած Տրանսվալի մասին: Այն ժամանակ պատերազմի հոտ էր միայն փչում, և լրագրերը դեռ Տրանսվալի խնդրով այնքան էլ չէին հետաքրքրւում. Նոյն պատճառով Տրանսվալի վերաբերեալ գրուածների թիւն էլ շատ փոքր էր. Այժմ օր չի անցնում, որ թերթերում և ամսագրերում լոյս չտեսնեն նորանոր յօդուածներ Տրանսվալի պատմութեան, նրա կազմակերպութեան, տնտեսական դրութեան և այլ կարևոր խնդիրների մասին: Այդ նոր լոյս տեսնող նիւթերից օգտուելով՝ աչքի եմ անցկացնում իմ ամառուայ գրածներս և փոփոխութեան ենթարկելով ուզում եմ այժմ տալ «Նոր-Դար»-ի ընթերցողներին մի փոքրիկ յօդուած Տրանսվալի անցեալի ու ներկայի մասին:

Տրանսվալ բառը նշանակում է «Վաալի միւս կողմը» (Trans-Vaal): Տրանսվալը գտնւում է Հարաւային Աֆրիկայում, Վաալ և Լիմպոպո գետերի մէջ տեղը: Շրջապատուած է անգլիական գաղութներով: Կլիման առողջարար է, հողը յարմար թէ հողագործութեան և թէ խաշնարածութեան համար, որով գլխաւորապէս զբաղւում են բնակիչները: Երկիրը շատ հարուստ է հանքերով, մանաւանդ ոսկով:

Տրանսվալի պատմութիւնը կարճ է, բայց ուշագրաւ. 1652 թուականին հոլլանդացի գիւղացիները իրենց հայրենիքից կտրուած, Հարաւային Աֆրիկա և հիմնում են Կապշտադ քաղաքը (անգլիական այժմեայ Կապլանդ գաղութի մայրաքաղաքն է): Այդ գաղթականները և նրանց ժառանգներն են, որ կոչւում են բուր կամ բոէր, հոլլանդական bawer բառից, որ նշանակում է գիւղացի: Երեսունհինգ տարի անցած այդ գաղթականների հետ միանում են նաև ֆրանսիացի գաղթական բողոքականներ, որոնք ժամանակի ընթացքում բոլորովին ձուլւում են աւելի բազմաթիւ, հարուստ և առաջ հոլլանդական տարրի հետ: Այսպէս՝ այժմեայ բուրերի մէջ կարելի է գտնել այնպիսիների, որոնք բոլորովին այլազգացել են, բայց որոնց նախնիքը բուն ֆրանսիացիներ են եղել, օրինակ, այժմեան նախագահ Կրյուգերը սերւում է ֆրանսիական Դիւ Պլեսսի տոհմից:

Ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ անգլիացիք օգտւում են ընդհանուր խառնակ վիճակից և հոլլանդացիների ձեռից խլում են նրանց ամենալաւ գաղութները, ի մէջ այլոց և Հարաւային Աֆրիկայում գտնուածները: 1814-ի պարիզեան դաշնադրութեամբ Կապլանդը, բուրերի հիմնած գաղութը, պաշտօնապէս անցնում է անգլիացիների ձեռքը: Սկզբից անգլիացիք լաւ էին վարւում բուրերի հետ, վերջիններս էլ ամեն կերպ օգնում էին նրանց շրջակայ վայրենի ցեղերին նուաճելու գործում: Բայց երբ երկիրը մի քիչ խաղաղուեց, և անգլիացիների ոտքը ամրացաւ, նրանք սկսեցին նեղել բուրերին գլխաւորապէս դիպչելով նրանց ազգային ինքնասիրութեանը, այսինքն արգելելով նրանց մայրենի լեզուի դասաւանդութիւնը, հալածելով նրանց կրօնը և այլն: Պէտք է գիտենալ, որ այդ այն ժամանակներն էր, երբ անգլիացիք դեռ այժմեայ նման հմուտ չէին գաղութները կառավարելու գործում և գաղութներին այժմեայ նման ազատութիւն և ինքնավարութիւն տալը անյարմար էին համարում: Բուրերը տեսնելով որ անգլիական նեղութիւններին վերջ չի լինելու, հաւաքում են իրենց ունեցած-չունեցածը և ընտանիքների հետ գաղթում են դէպի հիւսիս արևելք: Բուրերի փոքր մասն է միայն մնում Կապլանդում, որի ժառանգներն այժմ մեծ դեր են խաղում այդ գաղութի մէջ, և անգլիական հպատակները միշտ հակւած են միշտ իրենց տրանսվաալցի հայրենակիցների շահերը պաշտպանելու, երբ վերջիններս մի որևէ վէճ կամ ընդհարում են ունենում անգլիացիների հետ: Բուրերը 1833 թուականից սկսում են թողնել իրենց երկու հարիւրամեայ բնակավայրից և չտեսած հասնելով ազատ և բարգաւաճ վայրը՝ հիմնում են Նատալ հասարակապետութիւնը: Սակայն անգլիացիք իրենց տէր հռչակելով Նատալի հողերին՝ ստիպում են բուրերին այդտեղից էլ հեռանալ: Իսրայէլի զաւակների նման՝ բուրերը շարունակում են իրենց ճանապարհը և երկու մասի բաժանուելով հիմնում են՝ Օրանժի հասարակապետութիւնը, և յայնկոյս Վաալ գետի—Տրանսվալի հասարակապետութիւնը: Սկզբում անգլիացիք այդ երկու հասարակապետութիւնների անկախութիւնն էլ չէին ուզում ճանաչել, սակայն 50-ական թուականներին անգլիացիք ստիպուած են լինում այդ անել: Այդ ժամանակ Տրանսվալի նախագահը Պրետորիուսն էր, որի անունով մայրաքաղաքն էլ կոչւում է Պրետորիա: Բուրերն իրենց շրջապատող վայրենի ազգերին՝ կաֆրներին, զուլուսներին, մաթաբելներին և այլոց զսպելուց յետոյ անձնատուր եղան իրենց սիրած զբաղմունքներին՝ երկրագործութեան և խաշնարածութեան: Երկիրն սկսեց ծաղկել և սակաւ առ սակաւ սկսեց կազմակերպուել՝ 1858 թ. կազմուեց և հաստատուեց սահմանադրութիւնը (grouwet), որ թէպէտ թերի ու անկատար էր, բայց էլի մշտ-

նկատողութեան առնելով ազգ. վարչութեան կողմէ, իր խնդրանքներուն գոհացում տալու: Վանայ այցելու հովիւը հրաժարած չէ, բայց մեկուսացած է իր պաշտօնին վերաբերեալ կարգ մը դժուարութիւններու պատճառաւ, գլխաւորաբար նիւթական պէտքեր, որոնց հարթումէն կախում ունի իր վերադարձին առաջնորդարան:

—Երէկ պատրիարքարանէն հեռագրուեցաւ Վանայ այցելու հովիւ տ. Ներսէս եպիսկոպոս Ալանեանին, որպէս զի տ. Վահրիճ վարդապետին ճամբու ծախքն առաջնորդարանի սնտուկէն հոգացուի ի հաշիւ պատրիարքարանի, և Քղիի առաջն. տեղապահը փութով ճամբայ ելլէ իր պաշտօնատեղին ուղևորելու համար: Միևնոյն ժամանակ, հեռագրուեցաւ Ալանեան սրբազանին, թէ 33 բանտարկեալներուն արձակուած ըլլալու լուրը բերկրութեամբ իմացուած է և թէ մնացեալ վեց բանտարկեալները՝ որոնք նոյնպէս կայս. ներման արժանացած են՝ անշուշտ պիտի արձակուին այսօր վաղը:

—Ամերիկայի հայ գաղթականութեան մէջ վարդապետական անդրանիկ ձեռնադրութիւն մը կատարուած ըլլալու լուրը կիմանանք՝ այդ գաղթականութեան հոգևոր հովիւ տ. Յովսէփ եպիսկոպոս Սարաճեանի ստորագրութիւնը կրող Ուսզըրէն ուղարկուած յայտարարութենէ մը:

—Կըսեն, թէ ս. պատրիարք հայրը մտադիր է նոր դիմում մը ընել ազգին կարող դասակարգին մարդասիրական զգացումներուն, գաւառայի կարօտեալներուն և որբանոցներուն նպաստներ հասցնելու համար, որոնց պէտքն անհրաժեշտ կըլլարձնեն յաջորդաբար պատրիարքարան հասնող խնդրանքները և վերահաս ձմրան առաջ բերած պէտքերը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեծ. պ. Խմբագիր,

Ամսիս 27-ին 21 տարեկան հասակում վախճանւում է Ե. Ա. Եսանգուլեան: Մարմինը տնից եկեղեցի տանելու ժամանակ՝ հանգուցեալի մայրը, ազգականներն ու մօտաւորապէս 50—60 բարեկամներ խնդրում են Բագուի նորընծայ ծխատէր քահանաներից մէկին (հայր Գ.), որ մինչև եկեղեցի ոտքով գնան, ընդունուած սովորութեան համաձայն, մանաւանդ որ եղանակն էլ լաւ է: Ծակայն քահանան ասում է, թէ ինքը սովորութիւն չունի ոտքով գնալու և պէտք է կառք նստի... Քահանան իր ասածն է անում, և ժողովուրդը, քահանայի այդ վարմունքից զայրացած, առանց քահանայի, դագաղը ձեռքերին բռնած բերում է եկեղեցի:

Մեր խօսքը քահանայի այդ վարմունքի մասին չէ. մենք գիտենք, թէ մեր քահանաները ո՛ր աստիճան դժուարահաճ մարդիկ են: Ցաւում ենք միայն այն հանգամանքի վրայ, որ ննջեցեալի ծնողներն արդէն վճարած էին տ. Լուսաւորիչ եկեղեցուն 1000 րուբլի նուիրել ի յիշատակ իրենց մինուճար որդու, և այսօր, շնորհիւ յիշեալ քահանայի վարմունքի, հրաժարւում են վճարից, որը, հակառակ բողոքական ազգականների կամքի, տիկնոջ եղբայրները գլուխ էին բերել:

Երկրորդ ցաւալի կէտն այն էր, որ դէպքի միջոցին հանգուցեալի բողոքական ազգականներն աշխատում էին առանց քահանայի հողին յանձնել հանգուցեալի մարմինը՝ խոստանալով որ հօթը գիշեր պաստորը կըգնայ և տիկնոջը կը մխիթարէ:

Արձանագրելով այս փաստը՝ կասենք, որ դա դեռ փոքրագոյնն է այն չարիքներից, որոնք ստեղծւում են մեր քահանաների ապօրինի ընթացքի շնորհիւ:

Յարգոյ խմբագիր, խնդրում եմ տպագրել նամակս, որպէս զի իմացուի, թէ ինչպէս են վարւում մեր քահանաներից ոմանք ժողովրդի և եկեղեցու շահերի հետ: Իսկ մեր քահանաները թող էլի շարունակ կրկնեն, որ ժողովուրդը հոգևոր հօրը պատուել, վարձատրել չի իմանում:

Ընդունեցէք և այլն...

Սմբատ Գարագաշ

Բագու, 30 հոկտ.

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ ԲԱԳՈՒՈՒՄ

Բագուի դերասանական խմբի չորրորդ ներկայացումն էր «Ուրուականների Ծանից» Լ. Ֆուլդի 4 գործ. կոմեդիան, թարգ. տիկ. Ս. Արտեմեանի:

Խրախուսանքի արժանի է յարգելի տիկ. Արտեմեանի աշխատութիւնը: Տիկինը միշտ սիրով է վերաբերուել հայոց բեմին, երբեմն-երբեմն իբրև թատերասէր բեմ դուրս գալով, իսկ այսօր նա իր թարգմանութեամբ հարստացնում է հայրենի բեմի աղքատ ռեպերտուարը: Ի հարկէ, սրածը մի մեծ գործ չէ ընդհանրապէս, բայց մեզ համար՝ մանաւորապէս Բագուի համար մի գովելի և յիշատակութեան արժանի գործ է,» որովհետև Բագուի բարձր դասի կանայք մեծ մասամբ պարապ են անցկացնում իրենց ժամանակը, իսկ ուսումը և ըստացած կրթութիւնը վատնում են պճնուելու և աւել կօշիկների վրայ. ուրեմն որքան ուրախալի է, որ գէթ անհատներ բացառութիւն են կազմում ընդհանուր հոսանքից և իրենց ոյժերի չափ աշխատում են օգտակար լինել հասարակութեան:

Թարգմանութիւնն ընդհանրապէս յաջող կարելի է համարել. թէև ոճերի անհարազատութիւն նկատելի էլ խաղալու ժամանակը, որ մասամբ կարելի է վերագրել դերասանների արտասանութեան և մասամբ էլ յարգելի տիկնոջ հայոց լեզուի անվարժ լինելուն *):

Չենք կարող գովել տիկնոջ ընտրութիւնը պիէսի վերաբերմամբ, որը մի առանձին բան չէր ներկայացնում. աշխատանքը կարելի էր գործ դնել աւելի արդիւնաւոր կերպով՝ ընտրելով մի գեղեցիկ և ընտիր գրուածք և ոչ թէ «Ուրուականների Ծանից» մի կէս-կոմեդիա, կէս-վոդեվիլ:

Պիէսն սկսւում է լուրջ կերպով, բայց զարգացման ընթացքում և վերջն ընդունում է վոդեվիլի բնաւորութիւն: Ծանօթանանք բովանդակութեան հետ:

Օրիորդ Լիդիա Դալբերգ (տ.Սիրանոյշ) նկարչուհի է, սկզբում անյայտ, բայց վերջը, շնորհիւ իր ձեռքերի, հռչակ է ստանում. ամենայն տեղ նրա առաջ դռները բաց են, ուր որ նա լինում է՝ նրա շուրջն են խմբւում, նրանով հետաքրքրւում. ունի բազմաթիւ երկրպագուներ, որոնցից նշանաւորն է բարոն Տրոլ (Պետրոսեան), որը խնդրում է օրիորդի ձեռքը, բայց սա մերժում է, որովհետև սիրում է մի ուսուցչի (Արէլեան), որը սկզբից գրաւել է նրա սիրտը, օգնել է և ուղղեցոյց է եղել իր բարձրանալուն. ուսուցիչ Մաքս Վէյլարեխտ սիրում է օրիորդին. Նրանք հանդիպում են հարուստ Կրուզեոսի ընտանիքում, մինչև եղբայր սէրը յայտնում, նշանւում են և ապա պսակւում, երազելով խաղաղ և երջանիկ ընտանեկան կեանք. բայց այդ երազած ընտանեկան երջանիկ կեանքն իրականութիւն չէ դառնում մի այլպիսի կոյզի համար, այլ— «Ուրուական»: Կինը հռչակաւոր նկարչուհի է, անուն, փառք ունի, ամենքը նրան ճանաչում են, իսկ նրա ամուսինն—ոչ. սա մի անյայտ ուսուցիչ է. ամեն տեղ կնոջ հրաւիրում են, ամուսնուն ոչ. ամեն մի բարձրաստիճան անձն գալիս է ոչ թէ Վէյլարեխտ ամուսիններին մօտ այլ «օրիորդ Լիդիա Դալբերգի»: Այս բոլորը տանել չի կարող ուսուցիչը. նա իրան վիրաւորուած, ստորացած է զգում ուրիշների և կնոջ առաջ. այդ իսկ պատճառով ոչ մի հրաւէրքի չի գնում և իր տանը եղածներին մասնակից չի լինում. նա քաշուած կեանք է վարում, օր ու գիշեր աշխատում, գրում է լոնգոբարդների պատմութիւնը, որ ներկայացնէ գիտութեանց ճեմարանին, որպէսզի այդ ճանապարհով անուն ու հռչակ ստանայ և հասնի ուսուցչապետութեան կոչման և իրեն իւր կնոջ առաջ ստորացած չզգայ, այլ նրան հաւասար և արժանի: Կինն էլ իւր ծանօթութեան միջոցով մանաւանդ իւր երկրպագու բարոն Տրոլի միջոցով ամուսնուց ծածուկ աշխատում է իւր ամուսնուն հասցնել իւր բաղձանքին, այդ իսկ պատճառով ամուսնուց ծածուկ գնում-գալիս է բարոն Տրոլի մօտ: Մինչ այդ՝ մինիստրութիւնից թուղթ է գալիս, որ լոնգոբարդների պատմութիւնն ընդունուել է, և Մաքսը հրաւիրւում է ուսուցչապետութեան: Մաքսն ուրախացած սպասում է իւր կնոջը, որն իրեն ասել էր, թէ գնում է ընկերուհու մօտ, բայց մի տամակից իմանում է, որ ընկերուհու մօտ չէ, այլ բարոնի մօտ է գնացել. կասկածում է կնոջ հաւատարմութեան վրայ և, երբ նա վերադառնում է, ըսկըսում է նախատել և անպատուել. իսկ կինն իրեն արդարացնելու համար պատմում է, որ գնացել էր բարոնի մօտ միջնորդելու, որ նա աշխատի ընդունել տալ ամուսնու գրուածքը և նրան էլ հրաւիրել տալ ուսուցչապետութեան: Այս յայտնութիւնն աւելի վիրաւորում և ստորացնում է ուսուցչին, որը կարծում էր, թէ իւր աշխատութեան և ուժերին է պարտական, այն ինչ յայտնւում է, որ ինքը ոչնչութիւն է և պարտական է իւր կնոջն ու նրա բարեկամներին. կռւում են, միմեանց վիրաւորում և նոյն իսկ միմեանցից բաժանւում և առանձին-առանձին գնում իրենց նախկին բարեկամ բժիշկ Լիբենաուի (Վրոյր) մօտ գիշերելու օթեան խնդրում. բայց այդտեղ բացւում է, որ կնոջ միջնորդութիւնն ի զուր է անցել և Մաքսը պարտական է իւր աշխատութեան և ոյժերին. հաշտւում են և միանում իրենց երազած կեանքն այժմեանից վայելելու:

Ինչպէս վերևը նկատեցի, պիէսն ըսկըսւում է բաւականին լուրջ հիմունքներով, բայց կամաց-կամաց այդ լրջութիւնը փոխւում է և վերջը վոդեվիլի բնաւորութիւն է ստանում: Բացի դրանից, գրուածքում երկրորդական և անտեղի ընդմիջումներ շատ կան. օրինակ՝ թէյ, շամպայն խմել, հաց ուտել, երկար ու բարակ նկարները դիտել, որոնք անխօս են կատարւում, բաւականին ժամանակ են խլում, խաղը դանդաղեցնում և տպաւորութիւնը թուլացնում:

Պիէսի թուլութեան պատճառով խաղն էլ այդ երեկոյ թոյլ էր և սառն անցաւ, հասարակութեան մէջ էլ կենդանութիւն, հետաքրքրութիւն չզարթեցրեց: Տպաւորութիւնն աւելի թուլանում և ծիծաղելի կերպարանք է ստանում, երբ յանկարծ մի չքեղ ու արւեստակերտ բալի փոխարէն ներկայացնում են մեր մի ջուտ-մի կենտ դերասանները, ոչ կարգին զգեստով և ոչ էլ վայելուչ ու կրթուած ձևերով, մի ինչ-որ գաւառական կնունք կոչունք:

Չենք կարող ասել, թէ տիկ. Սիրանոյշը նկարչուհու դերը վատ խաղաց, բայց գովելու էլ առիթ չունինք. իւր՝ դերը չէր և խաղում էր կարծես ակամայից: Արէլեանն ուսուցիչ Մաքսին դուրս բերեց ոչ թէ մի լուրջ, գիտնական մարդու տիպար, այլ կէս լուրջ, կէս-միամիտ և կէս-կոմիքական անձն (ասենք պիէսից էլ այդ պարզ չէր երևում):

Միմիայն պ. Պետրոսեանի մասին կարող ենք ասել, որ կարող է վայելուչ կերպով խաղալ արիստոկրատների դերեր և միւսների նման անտաշ և անկիրթ չի երևում այդ տեսակ դերերում:

Այդ երեկոյ խաղում էր առաջին անգամ և օր. Աղամեան. չենք իմանում, թէ յարգելի օրիորդն էլի ուրիշ անգամ բեմ դո՛ւրս է եկել թէ ոչ, բայց այդ օրուայ խաղից երևում էր, որ նա բաւական վստահ է խաղում. ձայնը, շարժուածքները բնական էին և ազատ. ընդհանուր տպաւորութիւնը լաւ էր. միմիայն շուտ-շուտ վարժուհու ձեռք ցուցամատով սպառնալը, մանաւանդ իրենից տարիքով և դիրքով բարձր անձի, վայելուչ չէ:

Դիլ-Աղամ

Բագու, 31 հոկտ.

* Երբ լեզուին վարժ չէ, ինչպէս է թարգմանում, և այն էլ յաջող: Խմբ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ, 28 հոկտեմբերի.— Ամսիս 27-ին նոր քաղաքագլխի նախագահութեամբ տեղի ունեցաւ քաղաքային խորհրդի հերթական նիստը. Իրաւասուներից մի քանիսները ներկայ չէին. անցնելով ակմբանոց՝ ես տեսայ բացականերից մի քանիսներին թուղթ խաղալիս. այդքա՛ն էլ անտարբերութիւն անփութութիւն: Պարոններ՝ ինչո՞ւ էք իրաւասու ընտրւում, եթէ քաղաքային գործերը ձեզ համար միայն ինտրիգներ սարքելու արժանաւորութիւն ունին:

Նախագահում էր նոր քաղաքագլուխը հանգիստ, բայց առանց նախկին քաղաքագլխի պէս պոռալու էլ կարողանում էր կարգ պահել խօսակցութեան ժամանակ: Առ այժմ քաղաքագլուխը հակադիր կուսակցութիւն չունի, եթէ չհաշւենք պ. Պալապանեանին և նրա մի քանի բարեկամներին, որոնք անդի...

ցնում էր սրաչ կարգ ու կանոն բօէրների մէջ, որոնք ժամանակի ընթացքում թափառական ժողովրդի հակումներ էին ձեռք բերել: Սահմանադրութեան հետ տրանսվաալցիք մտցրին և նոր պաշտօններ, հարկերի բաժանման կանոններ և այլն. բայց իրօք՝ նրանց ներքին կայքը, համերաշխութիւնը քայքայուել էր. ընդհանուրի շահն այլևս ի նկատի չէր առնւում, հարկերից խոյս էին տալիս: Պետական սնդուկը (գանձարանը) դատարկւում է, իշխանութիւնն անզօր է լինում զսպելու ժողովրդի ներքին երկպառակութիւնները: Շրջակայ վայրենի ազգերն օգտուելով ներքին երկպառակութիւններից յարձակւում են 1876 թ. բօէրների վրայ և լաւ ջարդում են նրանց: Անգլիան հէնց այդպիսի մի դէպք էր սպասում Տրանսվաալն ու Օրանժն իրեն հպատակեցնելու համար: 1877 թ. ապրիլի 12-ին անգլիացիք մտնում են Տրանսվաալի մայրաքաղաք՝ Պրէտորիում և ամբողջ երկիրն իրենց գաղութ են հռչակում: Բօէրներն այդ ժամանակ զբաղուած լինելով ներքին խռովութիւններով ու վայրենի ազգերի հետ ունեցած կռիւներով, մի առ ժամանակ չեն ընդդիմադրում անգլիացիներին. Բայց երբ մի քիչ կարգի են գալիս և ըմբռնում իրենց ողբալի դրութիւնը՝ իսկոյն բողոքում են. և երբ իրենց արդարացի բողոքն անուշադիր են թողնում անգլիացիք, որպէս մի մարդ՝ ոտքի են ելնում. 1880 թ. բօէրները Պրետորիուսի, այժմեան նախագահ Կրիւգերի և զօրքերի այժմեան հրամանատար Ժուբերտի առաջնորդութեամբ — անգլիացիներին մի քանի անգամ լաւ ջարդում են (մանաւանդ հռչակաւոր էր բօէրների յաղթութիւնը Matajula-ի մօտ):

Նոյն այդ ժամանակ Անգլիայում մինիստրութեան փոփոխութիւն է տեղի ունենում, և կառավարութեան ղեկն անցնում է արդարադատ Գլադստոնի ձեռքը: Սա տեսնելով, որ բօէրներն իրաւունք ունին իրենց երկրից վանելու անգլիացիներին՝ հեռացում դադարեցնում է պատերազմը, մանաւանդ որ Անգլիայի հասարակական կարծիքն էլ դէմ էր Տրանսվաալին տիրանալու խնդրին: 1881 թ. և ապա 1884 թ. Անգլիայի և Տրանսվաալի միջև կայանում են համաձայնութիւններ, որոնց հիման վրայ Տրանսվաալը լիովին անկախ ազատութիւն է ճանաչւում. Անգլիան հրաժարւում է նրա ներքին գործերին խառնուելուց. Տրանսվաալը 4-րդ յօդուածով պարտաւորւում է «օտար պետութիւնների հետ բացի Օրանժի հասարակապետութիւնից, առանց անգլիական թագուհու համաձայնութեան, ոչ մի դաշն կամ պայման չկապել»: Վերջին յօդուածը մացուած էր անոր համար, որ օտար պետութիւնների ազդեցութիւնը Հարաւային Աֆրիկայում չտարածուի: Այդ յօդուածն ի նկատի ունի այժմ Չեմբերլէնը, որ պնդում, է թէ Տրանսվաալն Անգլիային հպատակ երկիր է: Այդ, ի հարկէ, շատ սխալ կարծիք է. ոչ մի կառավարութիւն—ոչ Ֆրանսիան, ոչ Հոլլանդիան, ոչ էլ Գերմանիան—Չեմբերլէնին համակարծիք չեն, այլ ընդհակառակը լիովին ընդունում են Տրանսվաալի անկախութիւնը և Տրանսվաալի ներկայացուցչի հետ մտնում են ամեն տեսակ յարաբերութիւնների մէջ առանց Անգլիայի միջնորդութեան:

Մինչ այդ—տեղի են ունենում նշանաւոր դէպքերը. Օրանժի մէջ գտնւում են էլմաս, իսկ 80 ական թւականների սկզբից Տրանսվաալում բացւում են ոսկու ամենահարուստ հանքեր: Անգլիացիք նախ սկսում են նեղել Օրանժի բօէրներին և զանազան անօրինակ միջոցներով ստիպում են նրանց մի քանի միլիոնի ծախել իրենց Գրիքուալանդը, էլմասի ամենահարուստ վայրը. այդ դէպքից յետոյ անգլիացիք հանգիստ են թողնում Օրանժի բօէրներին: Մնում էին գլխաւոր ոսկու հանքերը, որոնք անգլիացիներին հանգիստ չեն տալիս մինչև օրս: Հանքերը յայտնուելու օրից անգլիացիք անընդհատ դիմում են Տրանսվաալ, մանաւորապէս Յոհաննէսբուրգ քաղաքը և նրա շրջակայքը. անգլիացիներից շատերն այդ ոսկու հանքերի շնորհիւ միլիոնատէր են դարձել, այժմս էլ հարուստ հանքերից շատերը նրանց են պատկանում: Անգլիացին ի բնէ բաղդախնդիր և շահախնդիր է, նա չի վախենում ոչ մի անելուց, արդիւնաբերութեան և վաճառականութեան մէջ նա պահպանողական չէ մեզ՝ հայերիս նման. նա աչքբաց է և համարձակ, մանաւանդ երբ գործը վերաբերում է ոսկու նման մետաղին: Անգլիացիների ետևից գնում են ուրիշ ազգերի ներկայացուցիչներ՝ գերմանացիներ, հրեաներ, ամերիկացիներ, մինչև իսկ հայեր. փառք Աստուծոյ—ամենքի համար էլ գործ ու տեղ է գտնւում և ամենքն էլ իրենց նպատակին հասած են համարում մի քանի տարի Տրանսվաալում մնալուց յետոյ: Տրանսվաալի ոսկու հանքերը կարծես անսպառ են, և ամեն տարի դուրս հանուած ոսկու քանակութիւնը մեծանում է այսպէս. 1887 թ. հանուած 2,107,100 ֆրանկի ոսկի, 1890 թուականն.—արդէն 45,028,300 ֆրանկ, 1895 թուականին—203,697,100 ֆրանկի, իսկ 1897 թ.—298 միլիոն ֆրանկի: Երկրագնդիս վրայ հանուած ոսկու քանակութեան հինգերորդ մասը Տրանսվաալինն է: Գիտնականների ասելով եթէ Տրանսվաալում ոսկի հանելու գործն այսպէս շարունակուի, դեռ ... տարուայ գործ կայ, այսինքն դեռ ... բաւ ոսկու հանքեր կան Տրանսվաալի հողի խորքերում:

Վերջ միւս անգամ

Մինաս Բէրբէրեան

անտեղի դիմադրում էին քաղաքային վարչութեան առաջարկութիւններին: Այսպէս, օրինակ, երբ քաղաքային վարչութիւնն առաջարկեց նուիրել Խ. Ճահուկեանին նրա քաղաքին տալիք 150 ր. պարտքը, պ. Պալասանեանն սկսեց առաջ ածել և համոզել, որ քաղաքը կարէկ անգամ չնուիրել պ. Ճահուկեանին և, եթէ հարկաւոր է, տան կահկարասիքը ծախել և փողն առնայ: Հարկաւոր է ասել, որ Ճահուկեանը ծերունի է, սնանկացել է և ժամանակին բաւականին օգուտ է տուել քաղաքին: Ցետոյ ես իմացայ, որ նախկին քաղաքագլուխ Պալասանեանի առաջ-առաջ հակառակելու պատճառն այն է եղել, որ Ճահուկեանի որդին Պալասանի հետ 15 հազար րուբլու դատ ունի. դատի պատմութիւնը բաւականին հետաքրքրական է, և ես ժամանակին այդ մասին կգրեմ:

Այս նիստում կարդացուեց և քննուեց տեղական ժողովրդական ուսումնարանների վերատեսչի առաջարկութիւնը—նշանակել քաղաքային ուսումնարանների հայոց լեզուի ուսուցիչ Խաչատրեանցին թոշակ: Քաղաքային խորհուրդն ի նկատի առնելով պ. Խաչատրեանի բազմամեայ ծառայութիւնը և այն հանգամանքը, որ նա իբրև հայոց լեզուի ուսուցիչ իրաւունք չունի թոշակ ստանալու պետական գանձարանից, վճռեց կապել նրան ցմահ 300 ր. թոշակ: Նոր Նախիջևանի հասարակութիւնը շնորհակալութեամբ կընդունէ, ի հարկէ, քաղաքի այս քայլը, որովհետև պ. Խաչատրեանը վաղուցուայ ուսուցիչ է և իբրև համեստ, բայց աշխատասէր գործիչ արժանի է ամենայն վարձատրութեան:

Նոյն նիստում հանգուցեալ Նիկողայոս Աճեմեանի կտակակատարները՝ պ. պ. Պետրոս Քէչէճեան և ս. Ցարութիւնեան ներկայացնելով իրենց մօտ գտնուող գումարների հաշիւը և վաւերաթղթերը (միայն արժէթղթերի գումարը հասնում է 36 հազարի), խնդրում էին իրենց հրաժարուած համարել պաշտօնից: Հրաժարուածների փոխարէն ընտրուեցան ծերունի Դր. Սալթիքեան և վաճառական Յ. Ճամուշնիկեան: Պէտք է գիտնալ, որ հանգուցեալն այդ կտակով թողած գումարը խնդրել է յատկացնել տեխնիկական ուսումնարանի. ուսումնարան բացողն ինքը քաղաքն է լինելու, իսկ կտակակատարները պէտք է հսկեն թողած գումարներն ու անշարժ կալքերը: Մինչև այժմս ուսումնարանը բացուած չէ, չնայած որ կտակակատարներն այդ առթիւ դիմել են քաղաքային վարչութեանը: Այժմ այդ կտակակատարները, տեսնելով որ մի կողմից հանգուցեալի կամքը չի կատարւում, իսկ միւս կողմից մի քանի իրաւասուներ անիրաւաբար յարձակւում են իրենց վրայ, թողնում հեռանում են գործից: Բայց մի՞թէ քաղաքային խորհուրդը իւր նոր ընտրութիւնով կարծում է, որ ուսումնարանի բացման գործը մեծ զարկ և ընթացք կըստանայ. ես վախենում եմ, որ այժմ բոլորովին կըքնի եւ, վերջապէս, այն իրաւասուները, որոնք աջ ու ձախ խօսում էին նախկին կտակակատարների մասին, ինչու իրենք չաշխատեցին ընտրուել, ինչու են փախչում գործից:

Ախ, Նախիջևանցի՛ք. որքան քիչ ապրեցայ ես ձեր մէջ, բայց որքան լաւ հասկացայ ես ձեզ:

«Մենք նախիջևանցիքս փափուկ մարդիկ ենք»,—ասում են ինձ նախիջևանցիք. և իրաւ որ այդպէս է:

Անկախ

ԱԽԱԼՔԱԼԱՔ, 1 նոյեմբերի. — Մեր քաղաքում մինչև նոյեմբերի վերջը գոյութիւն ունէր մի գրադարան-ընթերցարան, որը մեծ օգուտներ էր տալիս քաղաքի և գաւառի ժողովրդին. պարապ և տօն օրերին ընթերցարան յաճախելով և գրքեր վերցնելով՝ ժողովուրդը հոգեկան և մտաւոր սնունդ էր ստանում: Օգտուողների թիւն աւելի եւ մեծացաւ, երբ մեր քաղաքն անցեալ տարի մեծ թւով զօրքեր եկան, որոնց սպաներն ու առհասարակ ընթերցող մասը շատ մեծ օգուտներ էր ստանում գրադարանից:

Գրադարան-ընթերցարանը հիմնել են 1880 թւին մի քանի մարդիկ «Հայոց եկեղեցական ծխական դպրոցներին կից գրադարան - ընթերցարան» անուամբ, այնպէս որ միանգամայն մասնաւոր մարդկանց կողմից հիմնուած մի մասնաւոր հիմնարկութիւն պէտք էր համարել այն: Ունէր հաստատուած կանոնադրութիւն, որի մի կէտի համաձայն՝ փակուելու դէպքում պէտք է անցնէր իբրև սեփականութիւն հայոց եկեղեցական-ծխական դպրոցների:

Հոկտեմբերի 28-ին, գաւառապետի միջոցով՝ գրադարանի հիմնադիր անդամները նահանգապետից մի հրաման ստացան, որով պատուիրւում էր գրադարան-ընթերցարանը յանձնել նախկին հայոց դպրոցներին այն հիմամբ, որ նա նրանց սեփականութիւնը լինելով՝ պէտք էր մինչև այժմ յանձնուած լինէր դպրոցներին վերջիններիս փակուելու ժամանակ: Հիմնադիր անդամները դեռ ես մայիսին վճռել էին քաղաքին նուիրել Պուշկինեան վերանուանելով Պուշկինի ծննդեան 100-ամեակը յարգելու համար: Այժմ էլ խորհուրդ կազմելով վճռեցին խնդրել գաւառապետից, որպէսզի յետաձգի գրադարանը դպրոցներին յանձնելը՝ մինչև նահանգապետից նոր կարգադրութիւն ստանալը, իսկ վերջնիս ուղղեցին մի թուղթ, խնդրելով, որ հաստատէ իրենց մայիսեայ ցանկութիւնը՝ —գրադարանը կարգադրէ յանձնել քաղաքին և ոչ թէ դպրոցներին, իբրև մի քանի մասնաւոր մարդկանց կողմից հիմնուած մի հիմնարկութիւն: Խորհուրդը իւր խնդրում բացատրում է այն թիւրիմացութիւնը, որի շնորհիւ գրադարան-ընթերցարանն ընդունւում է իբրև դպրոցների սեփականութիւն:

Մինը

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼՕ-ՏՐԱՆՍՎԱԱԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. —Գնդապետ Կարլտոնի զօրքի բուէրների ձեռքին գերի ընկնելն անգլօ-տրանսվաալեան պատերազմի ամենահետաքրքրական միջադէպերից մէկն է համարւում: 1,500 հոգուց բաղկացած զօրքն այնպիսի մի ստրատեգիկ ոյժ է ներկայացնում, որ դժուար է հասկանալ, թէ ինչպէս նա կարող էր զէնքը վայր դնել և անձնատուր լինել, մանաւանդ որ նա գտնւում էր իւր ամրացրած բանակի մօտերքը, ուր կարող էր փախչելով ազատուել: Լոնդոնի լրագրները հետևեալ կերպով են նկարագրում այդ միջադէպը: Գնդապետ Կարլտոնի զօրքը բաղկացած էր Գլօստերեան գնդից, իռլանդական հրացանաձիգներից և լեռնային թնդանօթաձիգներից: Նրա նպատակն էր ծածկելու գեներալ Ուայտի զօրաբանակի ձախ թևը նոյեմբերի 18-ի (30-ի) կռուի ժամանակ: Կարլտոնը բանակից դուրս էր եկել հոկտեմբերի 17-ի (29-ի) երեկոյեան և նոյն գիշերը յարձակման էր ենթարկուել բուէրների կողմից: Լեռան բարձունքից գլորուած երկու բեկոր իրարանցում ձգեցին ջորիների մէջ, որոնք և խրտնելով փախան, իրենց հետ փախցնելով թնդանօթներն ու ռազմամթերքի սայլերը: Անգլիացիները նահանջ տուին և բռնեցին հարևան բլրի գագաթը, ուր մինչև լուսադէմ տեղային ե...անդով հոգի պատնէշներ էին կանգնեցնում: Արշալոյսը բացուելուն պէս բուէրներն սկսեցին կրակել նրանց երկու հարևան բարձունքներից: Մի ամբողջ ժամ տևում էր այդ հրացանաձգութիւնը, բայց հոգի պատնէշների ետևը թագնուած անգլիացիները ոչ մի կորուստ չունեցան: Բայց չնայած անգլիացիների քամակից բուէրների մի նոր գօրք երևաց, որը կանգնելով մօտիկ տարածութեան վրայ, նոյնպէս սկսեց կրակել: Այս կողմից անգլիացիները պատնէշներ չունէին փորած, և նրանց միակ պաշտպանողը ժայռերի բեկորներն ու փոքրիկ վիմերն էին: Թշնամու կրակն այնքան զօրեղ էր ու նպատակին հասնող, որ անգլիացիները չէին կարողանում ընդդիմադրել: Հէնց որ այս կամ այն զինուորը գլուխը հանում էր ժայռի բեկորի ետևից, իսկոյն վայր էր ընկնում գնդակահար: Բուէրները թուով շատ էլ չէին գերազանցում անգլիացիներից, և վերջիններս կարող էին յետ մղել նրանց սուիններով, բայց դրա համար հարկաւոր էր վեր կենալ, հասանել, մինչդեռ ամեն մի անզգոյշ հաւէքման հետևանքը մահ էր լինում: Այդպիսով անգլիացիներից սպանուեց 4 հոգի և վիրաւորուեց 150 հոգի: 41 սպաներից ոչ մէկը չսպանուեց և միայն հինգը վիրաւորուեցին: Չնայելով, որ այս կորուստները համեմատաբար քիչ էին, բրիտանական զօրքը բարոյապէս այնքան լքուել էր, որ այլ ևս ոյժ չունէր ընդդիմադրելու: 843 զինուոր և 30 սպայ կամովին վայր դրին զէնքը, մօտ 100 հոգի ազատուեցին փախչելով: Բացառապէս հրացաններով տարուած այս փառաւոր յաղթութիւնն անշուշտ տեղ կըբռնի պատերազմական արուեստի պատմութեան մէջ:

Նոյն իսկ անգլիացիների տեսելով, բուէրները մեծ հոգացողութիւն ցոյց տուին յաղթուածներին: Նրանք ջուր էին բերում վիրաւորուածների համար, պատգարակներ էին շինում նրանց տեղափոխելու համար և արասխուրակներ էին պատրաստում այն վիրաւորների համար, որոնց ոտները կամ ձեռներն էին փշրուած: Միւսները վազեցին բռնելու այն ջորիներին, որոնք փախցրել էին գերիների հանդերձեղէնը: Բուէրներից ոմանք բրիտանական զինուորներին խնդրում էին, որ իրենց ծաղկանկար գօտիները նուիրեն իրենց՝ յիշատակի համար. բայց երբ իմացան, որ անգլիացիներն այդ գօտիների մէջ կարած են պահում իրենց փողերը, հրաժարուեցին այդ բանից և բերում նրանց էին յանձնում կորած կամ զէնքերը փամփշտենելու ժամանակ յետ արած գօտիները:

—Սրբեւմն Հարաւային Աֆրիկայում ծառայած անգլիական մի գնդապետ «Kreuezeitung»-ի Լոնդոնի թղթակցին պատմել է հետևեալ հետաքրքրական մանրամասնութիւնները բուէրների տակտիկայի մասին: «Իրենց ազատութեան համաձայն,—ասել է անգլիացիների գնդապետը,—մեր զինուորներն, բեռ երկայթին, նուագեցրել են թշնամու ոյժերը: Տարակոյս չկայ, որ բուէրների զօրաբանակն ընդհանրապէս բաղկացած է գիւղականներից և զինուորականներից զուրկ գիւղացիներից, բայց նրանց սերունդ սերունդ ժառանգաբար անցել է պարտիզանական պատերազմ մղելու արուեստը: Երբ բուէրները տեսնում են, որ աւելի ուժեղ թշնամին ձգել է իրենց, առանց հրամանի սպասելու յետ են դառնում ու փախչում. Երբ դա մի խելակորոյս փախուստ կարող է թուալ, բայց փախչելիս նրանք ինկամպէս աչքից չեն թողնում թշնամուն և իսկոյն յետ են դառնում ու յարձակւում, հէնց որ թշնամին նրանց սկսում է հետամուտ լինել աւելի թոյլ ոյժով: Նրանք կազմակերպւում են միայն զօրեղ ամրակծութիւնից, բայց այս դէպքումն էլ նրանք փախչում են նրա համար միայն, որ աւելի յարմար դիրք գտնեն յարձակման համար: Իրենց ռազմագիտութիւնը բուէրները սովորել են զուլուսներից, և իւր ժամանակին թանկ է նստել նրանց այդ բանը: Կռուելիս բուէրներն ու զուլուսները միշտ միևնոյն կարգն են պահպանում, այսինքն կանգնում են կիսալուսնի ձեւով: Այդպիսի կարգով կանգնելով, նրանք աշխատում են այնպէս անել, որ թշնամին յարձակւում գործի իրենց կենտրոնի վրայ: Եթէ այդ բանն աջողւում է նրանց սուտ յետ նահանջելու միջոցով, այն ժամանակ երկու թևերը, որոնք մինչև այն բոլէ կարելոյն չափ ծածկուած են պահւում, յարձակւում են թշնամու վրայ այս ու այն կողմից և ընդ նմին կենտրոնը նահանջ տալուց դառնում է յարձակողական դիրքի: Զօրավարների նպատակն այն է, որ գտնեն թշնամու ամենից աւելի թոյլ կողմը և այդ կողմը կտրեն գլխաւոր ոյժից: Բուէրներին երկար տարածութեան վրայ հետամուտ լինելը նոյնքան վտանգաւոր է, որքան և վիրաւորուած առիւծի ետևից առանց լցրած հրացանի վազելը»:

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ԿՐԻՍՏՕԼ, 2 նոյեմբերի.—Բիգոր ճառ խօսեց, որի մէջ ասաց, թէ շուտով ժամանակ կըգայ, երբ բաղդը բոլորովին երես կըշրջէ թշնամուց: «Պատերազմով,—շարունակեց ճառախօսը,—վերացուած են բոլոր պայմանագրութիւնները. Անգլիայի պարտքն է լաւ և արդարադատ կառավարութիւն հիմնել հաւասար իրաւունքների հիման վրայ,—մի այնպիսի կառավարութիւն, որն աւելի շատ երաշխիքներ տայ, քան տալիս է թղթի վրայ գրուած երաշխաւորութիւնը: Անգլիան պէտք է Հարաւային Աֆրիկային կարելոյն չափ լիակատար ինքնավարութիւն տայ»:

ՄԱՍԵՐՈՒ.—Մի քանի նշաններից երևում է, որ բազուտների ցեղապետ Եօէլն անցնում է բուէրների կողմը. միւսները հաւատարիմ են մնում Անգլիային:

ՏՈՒԼԻ.—Բուէրները հեռացան Տրանսվաալի հիւսիսային սահմանից մի զօրագունդ թողնելով Պոնտեդրիֆտում:

ԼՈՆԴՈՆ.—Գերմանական դեսպանը լորդ քաղաքագլխին գրեց, որ գերմանական կայսերական զօրքը չի կարող ընդունել քաղաքային տան մէջ լինելիք lunch-ին ներկայ լինելու հրաւէրը, որովհետև իւր այցը կարճատև է լինելու:

ՖՐԱՆԿՖՈՒՐՏ.—Մայնի վրայ.—Գեներալ Ժուբերի գլխաւոր բանակատեղից հոկտ. 9 թուակիր մի մասնաւոր նամակ է ստացուած Դենդիի մօտ եղած ճակատամարտի մասին: Այդ նամակից երևում է, որ հոկտ. 8-ին Գլէնկոէի մօտ Լուկաս Մէյերի հրամանատարութեան տակ գտնուած բուէրներից սպանուած էր 10, վիրաւորուած էր 27 հոգի. Անգլիացիներից սպանուած էր 39, վիրաւորուած էր 171 հոգի. բացի դրանից, հարիւր հոգի հուսարներ գերի են բռնուած: Ճակատամարտը տևել էր 8 ժամ. բուէրներն ունէին 1,000 հոգի և մի արմ բաձիգ գունդ, անգլիացիները—4,000 զինուոր և ամբաձիգ երկու գունդ: Երբ մօտեցաւ Բոթէմոսի հրամանատարութեան տակ գտնուած երկրորդ զօրքը, անգլիացիները նահանջ տուին դէպի Դենդի:

ՊԱՐԻԶ.—Պատգամաւորների ժողով: Մեծ կենդանութիւն է տիրում: Դեշանէլը կարդում է հարցապնդումներ ուղղելու բազմաթիւ պահանջներ: Վալդեկ Ռուսսոն պահանջում է, որ կառավարութեան ընդհանուր քաղաքականութեան վերաբերեալ բոլոր հարցապնդումները ի մի միացուեն և քննուեն իսկոյն: (Հաւանութեան աղաղակներ: Կոչէնը (աջ) ամբիոն է բարձրանում: Նա պախարակում է կառավարութեանը, որ նա, իւրեն աշխատակից ընտրելով Միլլերանին ընկերվարականների համար դուռ բաց արաւ իշխանութիւն ձեռք բերելու: Աջի անդամ Դըտոնվիլեան՝ պախարակում է Գալիֆէին զօրքը պաշտպանել չկարողանալուն և այն միջոցների համար, որ նա ձեռք է առել զինուորների դէմ: Ազգայնական Լազիե ռեւանդուն կերպով դատապարտում է մի քանի սպաների դէմ ձեռք առնուած միջոցները և աւելացնում է, որ սպաները բոլորովին իրաւունք ունին ասելու, թէ այժմեան կառավարութիւնը—դա խայտառակութիւն է: (Բողոքներ: Լազիեն ի կարգ է հրաւիրուած): Ճառախօսը շարունակելով ասում է, թէ ահա արդէն երկու տարի է, որ զօրքը յարձակումների է ենթարկւում և մնում է անպաշտպան: Այսպիսի կառավարութեան օրով դիսցիպլինայի խանգարումը պարտականութիւն է: (Բողոքներ: Լազիեն զրկւում է խօսքից): Գալիֆէն ամբիոն է բարձրանում: Մինիստրը բոլոր ոյժերով բողոքում է Լազիէ խօսքերի դէմ: (Ծափեր ձախ կողմից): Իւր առած ոչ մի խօսքի, իւր ձեռք առած միջոցներից ոչ մէկի համար մինիստրը չի զղջում: Աջի և ազգայնականների աղաղակների մէջ մինիստրն արդարացնում է մի քանի սպաների դէմ իւր ձեռքի առած միջոցները և նկատում է, որ ինքը ևս չափազանց շատ է խօսել: (Ծափեր ձախ կողմը): Ինչ վերաբերում է Նեգրիէին, այդ գեներալն սպաների ներկայութեամբ ասել է, թէ կառավարութիւնը թոյլ է տալիս, որ զօրքի վրայ յարձակումներ գործուեն, բայց, երբ զօրքի համբերութիւնը հատանի, սուիններն կարող կըլինեն նրան պաշտպանել: (Աղաղակներ աջ կողմից. «Կեցցէ զօրքը»): Գալիֆէն ասում է, որ ինքը կատարել է իւր պարտքը, Նեգրիէի դէմ պատժական միջոցներ ձեռք առնելով: (Ծափեր ձախակողմը): Ի վերջոյ մինիստրը յայտարարում է, որ ինքը պատասխանատու է դիսցիպլինայի համար, բայց իւր գործը չէ պարապելու այն բանով, ինչ որ ծածկուած կարող է լինել իւրաքանչիւրի խղճի վրայ (Ծափեր ձախակողմը, աղմուկ աջի և ազգայնականների նստարանների վրայ): Գասսանեակն ամբիոն է բարձրանում և ասում է, որ Դրէյֆուսին ներում շնորհելը զօրքին արուած ապտակ է: Ճառախօսը պախարակում է կառավարութեանը, որ նա չի պաշտպանում զօրքին, որին զրպարտում ու վիրաւորում են: Վիվիանին ասում է, որ ընկերվարականները պատրաստ են աջակցել կառավարութեանը, որի ծրագրները նրանք ընդունում են իբրև մինիմում: Նիստը փակուած է: Հետևեալ նիստը կըկայանայ հինգշաբթի:

Սենատը պաշտօնական նիստից յետոյ ցրուեց մինչև չորսը, որպէսզի վաղուանից շարունակի բարձրագոյն դատարանի նիստը:

ԼՈՆԴՈՆ.—Զինուորական մինիստրն անհեթեթ անուանեց լրագրների բաց թողած այն լուրը, թէ Կրիւգերն սպառնացել է հրացանի բռնել Պրետորիայում գտնուած բրիտանական գերի սպաներին, եթէ անգլիացիները հրացանի բռնեն իրենց ձերբակալած լրտես բուէրներին:

Այժմս կեդրոնացուող հինգերորդ զօրաբանակի հրամանատար նշանակուած է գեներալ Հարալդ Ուսալէն, որն արդէն փորձով ծանօթ է Հարաւային Աֆրիկայում պատերազմ վարելու եղանակին:

ԼՈՆԴՈՆ.—Զօրքեր փոխադրող «Britannie» նաւը հասաւ Կապշտադ: Այսպիսով հինգշաբթի օրուանից Կապ է հասել այդպիսի 12 նաւ՝ բերելով 15,000 հոգուց բաղկացած օգնական զօրքեր:

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(*Սոլոլակ, Սաղովայա փողոց*, № 64)

(*սեպհական տուն*)

Հեռախօս № 130

Երթևեկ հիւանդների ընդունարան ընդունելութիւն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամ 2---4-ը ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն ամենայն օր՝ ժամը 8---10 առաւօտեան---վճարը 2 ր.: Գիշերօթիկ հիւանդներ և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի: Հունկարները ձրի են: Գինեկոլոգիայի բաժանմունք ընդունուողները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրուայ գիշերուայ համար. ծննդաբերական բաժանմունքը մանողները---1 ր. մինչև 5 ր. մի օրուայ գիշերուայ համար: Երկունքից ազատուելը 10 ր. մինչև 50 ր.: Անպամահատութիւն ըստ համաձայնութեան ժամանակ ձրի: Հունկարների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տնոչի և նրա պ. ընկերների աւարկութեամբ ձրի:

Հիւանդանոցի տէր և տեսուչ՝

Մ. ՄԿՐՏՉԵԱՆ

ԲԺԻՇԿ Դ. Ս. ՀԵՐՑՖԷԼԴ

Թիֆլիս, Մադերովսկայա, 5

մասնագէտ կաշու, վեներական, սիֆիլիսական և միզային գործարանների հիւանդութիւնների (ելեքտրականութեամբ), երաղավրձաւ գէպի արտասահման կատարած գիտական ուղեւորութիւնից և վերանորոգեց հիւանդների ընդունելութիւնն ամեն օր առ. ժ. 9-11 և եր. ժ. 5-8.

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԻՑ ՄԵԿՆՈՒՄ ԵՆ

Հինգ տեղ ունեցող կարեթներ. առաջին - առ. 7 ժ. գիշերում է Մլէթում, Թիֆլիս հասնում է հետևեալ օրը եր. 6 ժ. 30 ր., երկրորդը - առ. 9 ժ., գիշերում է Դուդաուրում, հասնում է Թիֆլիս հետևեալ օրը եր. 7 ժ. 55 ր.:

Վեց տեղ ունեցող օմնիբուսներ առանց գիշերելու. առաջին առ. 11 ժ., Թիֆլիս հասնում է հետևեալ օրը ցեր. 1 ժ. 20 ր., երկրորդը եր. 8 ժ., հասնում է Թիֆլիս հետևեալ օրը եր. 10 ժ. 15 ր.:

Լինէյկա, առանց գիշերելու, - ցեր. 3 ժ., հասնում է Թիֆլիս հետևեալ օրը եր. 6 ժ. 10 ր.:

ՌԱԶՄԱ-ԳԻՐԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

(*մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը*)

Թիֆլիսից մեկնում են

Հինգ տեղ ունեցող կարեթներ. առաջինը.—առ. 7 ժ. գիշերում է Մլէթում, Վլադիկաւկազ հասնում է հետևեալ օրը եր. ժ. 20 ր., երկրորդը —առ. 9 ժ., գիշերում է Փասսնաուրում, Վլադիկաւկազ հասնում է հետևեալ օրը եր. 9 ժ. 20 ր.:

Վեց տեղ ունեցող օմնիբուսներ, առանց գիշերելու. առաջինը - ցեր. 1 ժ., Վլադիկաւկազ հասնում է հետևեալ օրը ցեր. 3 ժ. 25 ր., երկրորդը եր. 7 ժ. Վլադիկաւկազ հասնում է հետևեալ օրը եր. 9 ժ. 50 ր.:

Լինէյկա, առանց գիշերելու, ցեր. 3 ժ., հասնում է Վլադիկաւկազ հետևեալ օրը եր. 6 ժ. 20 ր.:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար № 1 գնացքը Բաքուից Թիֆլիս մեկնում է ցեր. 4 ժ. 15 ր., հասնում Թիֆլիս առ. 8 ժ. 40 ր., Թիֆլիսից Բաթում մեկնում է առ. 9 ժ. 10 ր., հասնում է Բաթում եր. 8 ժ. 32 ր.:

Մարդատար № 3 գնացքը Բաքուից Թիֆլիս մեկնում է գիշ. 12 ժ. 20 ր., Թիֆլիս հասնում է եր. 6 ժ. 38 ր., Թիֆլիսից Բաթում մեկնում է եր. 7 ժ. 37 ր., հասնում է Բաթում առ. 8 ժ. 12 ր.:

Մարդատար № 2 գնացքը Բաթումից Թիֆլիս մեկնում է առ. 9 ժ. 15 ր., Թիֆլիս հասնում է եր. 8 ժ. 53 ր. Թիֆլիսից Բաքու մեկնում է եր. 9 ժ. 23 ր., Բաքու հասնում է ցեր. 11 ժ. 40 ր.:

Պոստային № 4 գնացքը Բաթումից Թիֆլիս մեկնում է եր. 9 ժ. 05 ր., Թիֆլիս հասնում է առ. 9 ժ. 45 ր., Թիֆլիսից Բաքու մեկնում է առ. 11 ժ. 32 ր., Բաքու հասնում է առ. 6 ժ. 15 ր.:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի հոգաբարձական խորհրդում 24-ն նոյեմբերի 1899 ամի երեկոյեան ժամի 8-ին կրլինի աճրդավաճառութիւն կապալով տալու չորս տարի ժամանակաւ, 1-ից յունուարի 1900 թ. Սաղումը, քաղաքիս VIII մ. եղած հանգուցեալ Օքոյեանցի նուիրած կալուածքը (այժմս պանդոկ), որից ստացւում է տարեկան 905 ր.: Պայմանները կարելի է կարդալ հոգաբարձական դիւանատանը ամենայն օր, բացի կիրակի և տօն օրերից, ցերեկուայ ժամը 10—2:

158 2—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նոյեմբերի 24-ին 1899 ամի, երեկոյեան 8 ժամին Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի հոգաբարձական խորհրդում կրլինի աճրդավաճառութիւն կապալով տալու 4 տարի ժամանակաւ, յունուարի 1-ից 1900 թ. դպրոցի հին շինութեան ներքնայարկի կրպակները, նկուղներով. այդ կալուածքը գտնւում է քաղաքիս III մ. ռուսաց բազարում, որից այժմս ստացւում է կապալագրամ տարեկան 9000 ր.: Պայմանագիրը կարելի է ամենայն օր, բացի կիրակի և տօն օրերից ցեր-
154 թեկուայ 10—2 ժամը: 2—1

ԱՐՇԱԿ ՏԷՐ ՄԻՔԵԼԵԱՆԻ

ՀԱՇՈՒՇ. Ս. ԵԿԵՂԵՑՈՒ ՔՐԻՍՏՈՆԵԷԿԱՆՔ

Զեռնարկ դաւանաբանութեան

Հոգևոր դպրոցների բարձր դասարանների եւ

Ուսումնասէր ընթերցողների համար

600 երեսից --ԷԼԻ. ՓԷՇԸ 2 ր--ԷԼԻ

Ցասը և աւելի օրինակով բաժանող: գրաւողների համար 1 ր. 50 կ.:

Դիմել՝ Шуша Аршаку Теръ-Микельянъ 20—17

[0—1]

Հոյս տեսան

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

1900 *թ.*

ԾՈՑԻ ԵՒ ՊԱՏԻ

(*Շիրակ*)

ՕՐԱՑՈՑՑՆԵՐԸ

Ծոցի օրացոյցը զարդարուած է հայ մի քանի գործիչների պատկերներով, ունի նոր յաւելուած, ընդարձակ բժշկարան, հարուստ երգարան և նոր զուարճալի վիճակարան:

Պատի օրացոյցի մէջ կան բարոյական խրատներ, նոր ծիծաղաշարժ առակներ՝ մոլլա Նասր-Էդդինից, Դալի-Քէշիշից, Պրլբուլուից, այլ և ժողովրդական առածներ, զուարճալի լէլէներ, ընտիր բանաստեղծութիւններ, ժողովրդական երգեր, հայոց և եկեղեցական պատմութիւնից հատուածներ, զուարճալի պատմութիւններ. բժշկական, անտեսական, արհեստագիտական և այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ:

Գները՝ ծոցինը—20 կ., պատինը—50 կ.: Գումարով գնողներին լինում է զիջում:

Դիմել՝ Александрополь Карапету Апиніанъ. *կամ* Alexandropole Karapet Apinian (Caucase)

(150) 20 1

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԻՐԵՐ

Ծախւում են գործածուած, նոր և բոլորովին զուրս կանգնած կահ-կարասիք, տուն կահաւորելու իրեր, բրոնզ սարք, սոկի, թանկագին քարեր:

Москва, Неглинный проѣздъ, Пассажъ Солодовникова, рядомъ съ Арикосовымъ: *Մոսկուա, Սոլոդովնիկովի պասաժ, մուտքը Նէգլինից:*

(M) 12—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Մ. ՀՄԸԿԵԱՆԻ

1900 Թ.

ՕՐԱՑՈՑՑՆԵՐԸ

Ցանկացողները թող շտապեն՝ որպէսզի ժամանակին կարողանանք հասցնել:

Հասցէն՝ Թիֆլիս ՄԱԿԱՐ ՀՄԸԿԵԱՆ

148 10—3

ХВОЙНАЯ ЭССЕНЦІЯ

с.-петербургской

ТЕХНО ХИМИЧЕСКОЙ ЛАБОРАТОРІИ

Здоровое комнатное дезинфекціонное средство, распространяетъ пріятный, бальзамическій запахъ хвойнаго лѣса.

На каждомъ флаконѣ требовать собственно - ручную подпись красными чернилами провизора РАФАИЛА ЭЛПАШЕВА.

Главный Складъ:
С.-Петербургъ, Коломенская, д. № 12.

Продается вездѣ

(М.) № 59331 18—1

Лучшія средства для зубовъ:

ТИМОЛОВЫЙ ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ,

ТИМОЛОВЫЙ ЗУБНОЙ ПОРОШОКЪ,

НО ТОЛЬКО

С.-Петербургской

ТЕХНО-*химичес. лабораторіи*

Остерегаться подражаній

Главный Складъ:
С.-Петербургъ, Коломенская, д. № 12.

продается вездѣ

М. № 59421 9—1

ԱՄԵՆԱՑԱՑՏԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՌՕՅԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒԻՐՆԵՐ



Ֆիսհարմոնիումներ, չուլտակներ, կիթառներ, ֆլէյտներ, կլարնետներ, ձայնախաղեր, լարեր և այլն և այլն.

Բոլոր տեսակ գործիքների համար զինք կարելի է վաճառել մաս առ մաս

ՆՈՐ-ՊՐԵՅՍԿՈՒՐԱՆՑՆԵՐՆ

ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՆ ՀՐԻ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՀԱՇՆԱԽԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ

Դ Ե Պ Օ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Музыкальное депо

Б. М. МИРИМАНЯНЪ

тифлисъ, дворцовая ул. 36—22

ՇՏԱՊԵՑԷՔ !!!

ԱՑՏԵԿՆԵՐ!—*Ամենակարճ ժամանակ!*

ՄԻՍՍ ԷՄԷԼԻՆԻ!—*Ամենակարճ ժամանակ!*

ՊԱՏԱՆԻՆԻԿԻՏ!—*Ամենակարճ ժամանակ!*

ԳՆԵՐԸ ՊԱԿԱՍԵՑՐԱԾ ԵՆ

Ի-ին տեղը միայն 30 կոպէկ
Ի-րդ տեղը ,, 20 կոպէկ

155 12—1

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՊԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ և երկու տեսի անձանցը, պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողներին տանում են ատեստատներ:

Առանցքի առարկաները որոնք են. - 1) Առևտրական Ցնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առևտրական թղթակցութիւն 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն (վատ ձեռքի — почеркъ — ուղղելը):

Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնները՝ սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսերի գիտնական բնակարանում Սոլոլակում, Ալէքսանդր Փրիգոնովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նազարեանց փողոցների անկիւնում: Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ **ԶՐԻԱՊԷՍ** *հր. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսերի տանը* - **въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.**

(95) 25—23

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку Прачешная, домъ Теръ Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողներին տանում են ատեստատներ: Կուրսերում ուսանւում են՝ 1) առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրայ. 2) հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բանկային. 3) առևտրական թղթակցութիւն. 4) առևտրական տնտեսագիտութիւն. 5) առևտրական մուրհակային օրէնքներ. 6) գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագրումն ձեռագրի):

Պարապմունքները սկսւում են սեպտեմբերի 20-ից: Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամենայն օր՝ կուրսերում և «Եղբ. Ծովիանեան և Ընկ.» Բազուայ բաժանմունքում... Օտարազգացի ունկնդիրների յարմարութեան համար կուրսերում ընդունւում են գիշերօթիկներ: Կուրսերի կանոնագրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը — տրւում են եւ ուղարկւում են օրինաբար: Օտարազգացիները դիմում են учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ Касپարով, Баку.

99 25—25

УЧИТЕЛЬ ТАНЦЕВЪ

Л. П. Оверлло.

Обучаетъ кромѣ всѣхъ новыхъ и прежнихъ танцевъ еще вновь полученному танцу Русская Кадрилька „*Желанная*“ По средамъ спеціальные уроки мазурки. *Судебная ул. д. Пушкина* № 31 *противъ окр. суд.* Объ условіяхъ отъ 11 до 2 и отъ 5 до 8 вечера.

СЕКРЕТЪ КРАСОТЫ

ГЛИЦЕРО-ВАЗЕЛИНОВОЕ МЫЛО МОЛОДОСТИ

А. СІУ и К°. МОСКВА. 20 коп. куск.

(М.) № 109408. 52—10

Дозв. цензурою. Тифлисъ, Нояб. 4-го дня, 1899 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. церковный дом